

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՒԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

28.01.2023



Սիրելի՛ հայրենակիցներ

Հայոց բանակի հարգելի՛ զինվորներ ու սպաներ, Արցախյան բոլոր պատերազմների մասնակիցներ

ՀՀ զինված ուժերի կազմավորման 31-ամյակն է այսօր, և բոլորս օրվա հանդեպ առանձնակի ջերմություն ենք զգում, քանի որ Հունվարի 28-ը մեր ինքնիշխանությունը խորհրդանշող տոն է. սեփական բանակ ունենալը թանկ ու բարձրագույն արժեք է յուրաքանչյուր ազգի համար:

Բանակը կարևորագույն դեր ունի պետականության կայացման, ամրացման, պահպանման ու զարգացման գործում:

Իսկ Հայոց բանակի դերը հիմա, առավել քան երբևէ, գիտակցում ենք ամենքս:

Շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր ծառայում են ՀՀ զինված ուժերում, շնորհակալություն բոլոր պատերազմներում Հայաստան աշխարհի համար պայքարած անհատներին ու նրանց, որ պայքարում են հայրենիքի համար ներկա օրերում: Իսկ պայքարի ճանապարհին մեր ցանկությունն է ազատ, ապահով, ինքնիշխան հայրենիք ունենալը մեզ ու մեր երեխաների համար:

Հայոց պատմության մեջ միշտ են եղել բարդ ժամանակաշրջաններ և սպառնալիքներ, ու դրանք հաղթահարել ենք հենց հայ զինվորի ու հրամանատարի բազկի շնորհիվ:

Ասօր՝ մեծ խոնարհում մեր հայրենիքի համար նահատակվածներին,

երախտագիտություն՝ ՀՀ զինված ուժերի ստեղծման ակունքներում կանգնածներին:

Անվտանգ, խաղաղ ծառայություն, տոկունություն, ուժեղ կամք՝ մեր զինվորներին և բարի վերադարձ հարազատ օջախներ:

Շնորհավոր տոնդ, Հայոց բանակ: